



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

08 հոկտեմբերի 2019 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/2

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 3-ՐԴ ՆՏԱՇՐՁԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու **49** անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, խորհրդականները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետի մամուլի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարները:

Նիստին ներկա էին ՀՀ ՁԼՄ-ի ներկայացուցիչներ:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը տեղեկացրեց, որ ԻՄ ՔԱՅԼԸ կուսակցությունների դաշինքի Երևան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամ Արթուր Մանուկյանը դիմում է ներկայացրել ավագանու անդամի պաշտոնից հրաժարվելու մասին և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի **2019** թվականի սեպտեմբերի **25**-ի արձանագրության համաձայն՝ ԻՄ ՔԱՅԼԸ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվել է ԻՄ ՔԱՅԼԸ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու՝ Լուսինե Մխոյանին:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու **2019** թվականի հոկտեմբերի **8**-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու **3**-րդ նստաշրջանի **2**-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երվանդ Քրիստավորի Մանարյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:
3. Միխայիլ Բորիսի Պիտրովսկուն «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:
4. Երևան քաղաքում Դիանա Աբգարի անվամբ զբոսայգի անվանակոչելու մասին:
5. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
6. Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:
7. Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը նվիրելու մասին:
8. Երևան քաղաքի ավագանու **2019** թվականի հունիսի **17**-ի **N106**-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 42 անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

2. ԼՍԵՑԻՆ - Երվանդ Քրիստափորի Մանարյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյան:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Երվանդ Քրիստափորի Մանարյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել է ավագանու 1 անդամ: Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Դավիթ Խաժակյան – Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի 2801-րդ տարեդարձի առթիվ, թատերարվեստի և հայկական կինեմատոգրաֆիայի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի, ակնառու վաստակի, երկարամյա և բեղմնավոր գործունեության համար ՀՀ ժողովրդական արտիստ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Երվանդ Քրիստափորի Մանարյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 45 անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

3. ԼՍԵՑԻՆ – Միխայիլ Բորիսի Պիոտրովսկուն «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյան:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Արսեն Կարապետյան – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Միխայիլ Բորիսի Պիոտրովսկուն «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի 2801-րդ տարեդարձի առթիվ, հայկական մշակույթի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի, համաշխարհային մշակութային արժեքների պահպանման գործում ունեցած ակնառու վաստակի, երկարամյա և բեղմնավոր գործունեության համար Էրմիտաժ թանգարանի գլխավոր տնօրեն, ակադեմիկոս Միխայիլ Բորիսի Պիոտրովսկուն շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 49 անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 47, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

4. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում Դիանա Աբգարի անվամբ զբոսայգի անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Մելքոնյան:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Դավիթ Խաժակյան - Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գ. Մելքոնյան:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Սարենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Դիանա Աբգարի անվամբ զբոսայգի անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑՅՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել է ավագանու 4 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Իզաբելլա Աբգարյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Սարենիկ Մկրտչյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Լիլիթ Կիրակոսյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Գրիգորի Երիցյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Գլխավոր պողոտայի՝ Սարյանի, Բուզանդի, Կարեն Դեմիրճյանի փողոցների և Մաշտոցի պողոտայի միջանկյալ հատվածի զբոսայգին անվանակոչել հայ նշանավոր հասարակական գործիչ, գրող և հրապարակախոս, հայկական հարցի մասին մի շարք գրքերի հեղինակ, Ճապոնիայում Հայաստանի առաջին Հանրապետության պատվավոր հյուպատոս, աշխարհում հյուպատոս նշանակված առաջին կին, բարեգործ Դիանա Աբգարի անվամբ՝ «Դիանա Աբգարի անվան զբոսայգի»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 47 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

5. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վահան Խաչատրյան:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑՅՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտայի **հ.10/16** հասցեում գտնվող **2683.5**քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին **10**-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել կադաստրի կոմիտե և քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **43** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **40**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **3**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

6. ԼՍԵՑԻՆ – Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վահան Խաչատրյան:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝

Երևան համայնքի սեփականություն համարվող Մասունցի Դավթի փողոցի **h.87** և **87ա** հասցեում գտնվող շենքի **2-րդ** հարկի **39.5**քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով **3 /երեք/** տարի ժամկետով տրամադրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **40** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **39**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **1**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

7. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը նվիրելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Արթուր Մկրտչյան:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու **3** անդամ.

1. Լևոն Զաքարյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Իզաբելլա Աբգարյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Արման Անտոնյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը նվիրելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան համայնքի սեփականությունը համարվող **37.247.000** (երեսունյոթ միլիոն երկու հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամ մնացորդային արժեքով Երևան քաղաքի **H=308**մ բարձրությամբ հեռուստաաշտարակի գեղարվեստական լուսավորության համակարգը նվիրել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության

նախարարության «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությանը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 45 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 42, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

8. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյան:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 6 անդամ.

1. Թեհմինա Վարդանյան - Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

2. Սարկոս Հարությունյան - Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

3. Գրիգորի Երիցյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Դավիթ Խաչատրյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Դավիթ Խաժակյան - Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

6. Լևոն Հովհաննիսյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Ն. Սարոսյանը և Երևանի քաղաքապետի տեղակալ Ն. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել է ավագանու 5 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Լևոն Հովհաննիսյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Արման Անտոնյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Դավիթ Խաժակյան – Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

4. Հասմիկ Խաչունց - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար

5. Լևոն Զաքարյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

6. Սերգեյ Սարգսյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N106-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանի առաջարկությամբ որոշվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել **2019** թվականի նոյեմբերի **26**-ին, ժամը **11.00**-ին:

Երևանի ավագանու անդամների բանավոր հարցերին տրվեցին պատասխաններ (սղագրությունը կցվում է):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կազմեց՝
Լ. Արոյան